

ՀԱՅԵՐԸ ԴՐՍՈՒՄ

# ՊԱՐԸ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՀԳՈՐ ԳԵՆՔ



— Հարգելի Հրաչիկ Ալբերտի, նախ այս ծրագրի մասին պատմեք, խնդրեմ:

— «Պարենք միասին» — ը արդեն վաղուց ավանդույթ է դարձել: Պարերաբար հաճախվում ենք մեր հանդիպման վայրում՝ Սուրբ Խաչի բակում, հրավիրում ենք քաղաքում և մարզում գործող բոլոր հայկական պարային խմբերին: Օրագիրը շատ հազեցած է: Ելույթներին հաջորդում են պարի ու պուրջի, ասուների, երգի մրցույթները ներկաների մասնակցությամբ:

Մարդիկ կարիք ունեն միմյանց հետ շփվելու, միավորվելու սիրելի արվեստի շուրջ, իսկ պարը հայերիս համար սեր է ու պայքար, կարոտ ու նվիրում...

Մեր նպատակն է տարածել ազգային պարը, համախմբել երիտասարդներին ու նրանց ծնողներին հոգևոր ու մշակութային այս առանցքի շուրջ:

— Ինչպե՞ս եղավ, որ սկսեցիք պարել:

— Ճիշտն ասած ընտանիքս, որպես այդպիսին քիչ առնչություն ուներ պարի հետ, սակայն աշտարակցի իմ համեստ ու արվեստասեր ծնողներն ինձ յոթ տարեկանից տարան Աշտարակ քաղաքի մշակույթի տուն, ուր ընդունվեցի «Աշտարակ» պարի համույթ:

1984-2000 թթ. պարել եմ այդ խմբում, ընդմիջումը եղել է 1985-1987 թթ. բանակային ծառայության տարիներս:

— Ի՞նչ է պարը ձեզ համար:

— Սկզբում սիրելի զբաղմունք էր հորբի, ինչպես ասում են, հետո կյանքի իմաստ, սեր: Կյանքիս ընկերուհուն Լիանային, հանդիպեցի անսամբում, ամուսնացանք... Շարունակեցինք պարել նաև այն ժամանակ, երբ ծավեցին զավակներս Արփինեն ու Մարգարե, նրանք էլ սկսեցին պարել...

Պարը մեր դարձավ, մենք՝ իրենք...

— Օտարություն մ... ինչո՞ւ:

Օտար քաղաքում, մարդկային հոսանքի մեջ մենք՝ հայերս, ճանաչում ենք իրար հեռվից, էլ ավելի ճիշտ փնտրում ենք իրար խոշոր, տխուր աչքերով, վախվորած ու շտապող քայլվածքով: Ուզում ենք հարցնել:

— Ո՞ր ես շտապում, եղբա՞յր, այս կիրակի օրով:

— Եկե՛ղեցի:

Մտնում են եկեղեցու բակ և փոխվում է ամեն ինչ — ու այստեղ, կարծես թե, դու տանն ես: Իզուր չէ ասված՝ պանդուխտին սպասող բաց դուռ է հայկական եկեղեցին...

Իսկ գունա-դեղին ձայնը հուշում է, որ ինչ-որ բան այսօր արտառոց է: Սուրբ Խաչ եկեղեցու բակը հսկա պարահրապարակ է հիշեցնում, ուր քոչարի են բռնել հարյուրավոր երիտասարդներ ու մեծեր, մանուկներ ու հյուրեր:

Թողում է քոչարին:

Մի երիտասարդ, պարաշրջանի կենտրոնում կանգնած, բարձրախոսով հրահանգներ է տալիս:

— Հրավիրում ենք բոլորիդ մշակութային մեր տունին, ծրագիրը կոչվում է «Պարենք միասին»: Ուրեմն միացիր մեզ, սիրելի հայրորդի...

Պարաշրջանը գնալով մեծանում է...

Հերթով հնչում են Թամգարա, Յարխուշտա Հենգելի և այլ պարեր...

Օրագրի ավարտին սիրով զրուցում եմ Ռոստոմյում հայտնի «Արփի» պարային համույթի ղեկավար ՀՐԱՉԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԳԵՎՈՂԳՅԱՆԻ հետ:



### ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԱԶԳԻ ԿՈՒՌ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԱԶԱՏ, ԱՆԿԱՄ ՈՒ ՀԶՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆԻ ՄԱՍԻՆ:

Իսկ ընդհանրապես, երազում եմ այն հայրենասեր մեծահարուստի մասին, որը Ռոստոմյում կիսմիջի հայ մշակույթի կենտրոն կամ դպրոց, որտեղ մեր մանուկները, բացի ազգային պարից, երգից, լեզվից, կտավորեն նաև ազգային խոհանոց, գորգագործություն, ասեղնագործություն, մանրանկարչություն և այլ շատ ու շատ լավ բաներ:

— Երազում եմ իմ խմբով ճանապարհորդել աշխարհով, լինել հայկական գաղթօջախներում, ծանոթանալ նրանց արժեքներին, մատուցել մերը:

— Երազում եմ ընտանիքիս, հարազատներին առողջ, բարեկեցիկ, խաղաղ ու ապահով կյանքի մասին:



— 90-ականների Հայաստանում դաժան ու դժվարին տարիները հաջորդում էին միմյանց: Գիտեք նաև միջին մտավորականության վիճակը, հատկապես մշակույթի բնագավառի աշխատողների: 2000-ին որոշեցի գալ արտագնա աշխատանքի Դոնի Ռոստով: 2004-ին բերեցի նաև ընտանիքս: Չէիք եկել, որ մնալիք... Մտածում էիք մի քանի տարի կաշխատենք, որոշակի հարցեր կլուծենք ու ետ կգնանք: Ինչպես տեսնում էք դեռ գնում ենք... (ծիծաղում է):

— Ինչպե՞ս ընդունեց օտար քաղաքը ձեզ:

— Սկիզբը շատ դժվար էր՝ փնտրություն քաղաքային կենտրոնում, փաստաթղթերի... Չէտո կամաց-կամաց ամեն ինչ ընկավ հունի էնք: Երեխաներս ընդունվեցին դպրոց, սկսեցին այցելել Սուրբ Խաչին կից կիրակնօրյա հայկական դրպոց: Չենց այդ ժամանակ էլ Սուրբ Խաչի

քահանա Տեր Պողոս Տերտերյանի հետ որոշեցինք պարային խումբ հիմնել: Շուտով խումբն սկսեց գործել: Մակայն ինձ վիճակված էր մեկ ուրիշ դպրոցում շարունակել աշխատանքս:

2013-ին համույթն անվանեցինք «Արփի» և ելույթներով սկսեցինք հանդես գալ բոլոր տաղավար տոներին, համայնքային ու մարզային միջոցառումներին: Պարուսուցում եմ կազմակերպում ծնողների համար, ովքեր սիրով մասնակցում են անսամբի կյանքին:

«Արփին» այսօր մի օրգանիզմ է՝ պարային գունեղ տարազներով, պատանիներով ու աղջիկներով, մեկ շունչ ու մեկ անելիքով:

— Ամենափառատան ու տպավորիչը «Արփիի» կյանքում:

— Բիարկե մեր այցելությունները Հայաստան ու Արցախ: Ժամանակի ընթացքում հասկացանք, որ մեզ ամենից շատ կարոտում և սպասում են մեր ՏԱՆԸ:

2014 և 2016 թ. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակներում մեկնեցինք Հայրենիք: Ելույթներ ունեցանք Արցախում և Հայաստանի տարբեր քաղաքներում: Վերադարձանք անցնջելի հուշերով և Հայրենիքին սիրահարված (շատերն առաջին անգամ էին Հայաստանում):

— Իսկ ընտանիքի համար ժամանակ մնում է:

— Մեր ուրախությունը հրաշք թոռնուկիս է Եվան, Արփիիս դուստրը: Որդիս Մարգարե, հայկական բանակում ծառայելուց հետո, փորձում է իր կյանքը դասավորել:



— Ի՞նչ էք մտածում վաղվա օրվա մասին:

— Շատ եմ ափսոսում, որ այս համավարակի պատճառով ընդհատվեց շատ շատ աշխատանքների բնականոն ընթացքը, մերը նույնպես: Հուսանք, որ կյանքը շուտով իր հուն կվերադառնա:

— Եվ վերջում՝ ամենակարևորը, երազում եմ մեր ազգի կոտ միասնության մասին, ԱԶԱՏ, ԱՆԿԱՄ ու ՀԶՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ մեր առաջին ու վերջին ՀԱՆԳՐՎԱՆԻ մասին:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, լրագրող